

ԱՍՏՈՒՆԵԱՌԻՆՉ Ս. ԳՐԵՆ ՏՊԵՐՈՒԹԵԱՆ ԸՈԹԻՒ.

ԱՐԳԻՍ Ի սկզբանէ անտի կրօնական ա-
րարած լինելով՝ սիրահար է եղել Աստուա-
ծային յարաբերութեան հետ գոհացնելու
իւր հոգու և մօքի բարձրագոյն փափաղները
և ըզձերը: Սակայն եթէ չունենար մի ներ-
շնչեալ մատեան իր ձեռքին՝ պնդելու և
զօրացնելու այդ յարաբերութիւնը, անզօր
կը լինէր իւր հնարած արուեստներով, բնու-
թեան երևոյթներին տուած բացատրու-
թիւններով, մի խօսքով իւր գիտութեամբ ու
փիլիսոփայութեամբ հասնել վախճանական
նպատակի: Աստուած մարդկանց խորհա-
փութներէն ազատելու համար իւր ընտրեալ-
ների՝ մարգարէների և առաքեալների ձեռ-
քով՝ շնորհէ է իւր հոգով ներշնչուած մի
մատեան՝ Աստուածաշունչ Ս. Դիրքը, որ ցոյց
է տալիս մեզ Աստուծոյ հետ ունենալիք յա-
րաբերութեան ճշմարիտ ուղին: Աստուածա-
շունչը մի պարզ և էր մարդկութեան համար,
որ նորա սիրտը պէտք է լցնէր երկնային լու-
սով, նորա հոգին գիւթէր առ բարին, առ
գեղեցիկն, առ ճշմարիտն և առ Անմահն:

Աստուածաշունչ Ս. Մատենան աշխար-
հիս պատմութեան մէջ այնպիսի հզօր ներ-
գործութիւն ունեցաւ, անհատական և թէ
ազգերի կեանքի մէջ այնպիսի մեծամեծ փո-
փոխութիւններ յառաջ բերաւ, որպիսին
ոչ մի ուրիշ գիրք ունեցած չէ:

Ի՞նչի մէջ է այս զօրութեան դադանի-
քը? —

Ս. Դիրքի մէջ մարդկային սրտի բարախմանց
և մօքի մտածմանց պատասխանող մի ձայն
կայ, որ անկարելի է չը լսել, բարձրութիւն
կայ, որ ոչ ոք չի կարող անտես անել: Ս.
Դիրքի ձայնը ուղղակի գալիս խօսում է հա-
նուր մարդկային սեռի սրտի և մօքի հետ:
Մի գիրք է այն, որ ամեն կլիմայի, ամեն
գարի, ամեն պայմանի, հասակի և սեռի պատ-
կանող անձի հոգեւոր-բարոյական սնունդ է
մատակարարում, թէ դեռ արողորջ մանկան,
թէ ամենահասուն, փորձառու, ուսմամբ
և գիտութեամբ ճոխացած մարդուն, թէ
այլևոր ծերունուն, թէ անուպայ և անմշակ

երիտասարդի մօքին, թէ համալսարանների
դիտական ամբիոնները գրաւող ուսուցիչ-
ների, և թէ ամենաբարձր ընկերական շըր-
ջանների մէջ կրթուած ու զարգացած մար-
դուն, և թէ նորա Աստուածային հեղինա-
կութիւնը չընդունող անհաւատին: Ս. Դիրքը
անմահն է բոլոր գրքերի մէջ, որովհետեւ նորա
միակ նպատակն է առաջնորդել մարդուն դէպի
կեանքի գերազանց մօքութիւնը և գերա-
գոյն ազնուութիւնը և ճշմարիտ հաւատ ներ-
շնչել առ Աստուած: Ս. Դիրքը ցոյց է տա-
լիս, թէ ոչ միայն Ամենակալ և Ամենակարող
ահարկու մի բազուկ կառավարում է տիե-
զերքը, այլ նաեւ թէ՛ Նա մայրական քնքոյշ
սէր, խանդաղատանք ունի դէպի մարդկու-
թիւնը: Ս. Դիրքի ամեն էջերից մարդու սրտի
թիւերը թրթռացնող բարոյական սնունդն
գեղեցկութեան և բարձրութեան մի քարոզ է
հնչում, որին մարդս ծուր է խոնարհում
և թաց աչքերով կարդում Նորա սիրոյ
և քնքոյշ խնամքի այդ մարմնացեալ խորհուրդը:
Այդ ձայնը բոլոր իր պարզութեամբ ունի
մի այնպիսի անգիմաղբելի պերճախօսութիւն,
որ շատ գերազանց է Դեմոսթենէսների և
կիկերոնների պերճախօսութիւնից: Անհուն
սիրոյ, անհուն բարութեան, զթութեան և
արդարութեան անբաղդատելի գեղեցկութիւն
է շողում Նորա մէջ, որի տարօրինակ զօ-
րութիւնը գերում է մարդու հոգին: Մարդ-
կային բնութիւնը եթէ բոլորովին եղծեալ
չէ, չի կարող չը լսել և չը ճանաչել Աստուա-
ծային այդ ձայնը, որ մարդկային ուրիշ բո-
լոր գրքերից աւելի յստակ և անայլալակ
հնչում է Ս. Դիրքից:

Այսչափ դարերի քննադատութիւննե-
րից և հակառակութիւններից յետոյ, տասն
և իններորդ լուսափայլ դարու վերջերում
երկրագնդիս վերայ ապրող ամենից քաղաքա-
կիրթ և ամենից զարգացած ազգերը ամրա-
պէս բռնել են Ս. Դիրքը և ձեռքից թողնելու
բնաւ միտք չունին: Ազգեր են եղել, որոնք
իրենց յետին ճղնաժամի մէջ սեղմել են ամուր
իրենց կուրծքին Ս. Դիրքը և իրենց փրկութիւ-
նը և ազատութիւնը նորանով են գտել:

Բաւական է միայն Հայ ազգը օրինակ
բերենք: Մենք հայերս չենք կարող պարծե-

նալ մեր անցեալ քաղաքական փարթամ զբոսովեամբ և փառքով: Մեր զինացիները ահ և սարսափ չեն ազդել աշխարհին: Հայ անուշը հազիւ յիշուում է աշխարհիս քաղաքակրթութեան պատմութեան մէջ: Դիրքը և պարագաները միշտ աննպաստ են եղել մեր ազգին կարեւոր դեր կատարել ապու աշխարհիս թատերարեմի վերայ: Սակայն հայ ազգը կարող է պարծենալ աշխարհի առաջ թէ միշտ ունեցած և պահած է իր մէջ մաքուր բարոյական նկարագիր: Հայ ազգի այս բարեմասնութիւնը պէտք է վերագրել նորս կրօնատէր արամադրութեանը և Աստուածաշունչ Ս. Դրքի քարոզած գաղափարներին հետեւող լինելու իրողութեան: Եթէ իրողութիւնը աղտոյէ լինէր, վաղուց արդէն հայ ազգը Բաբելոնի բաղդակից կը լինէր և իր անունը ջնջուած աշխարհիս երեսից:

Այսօր և ընդ միշտ չը պէտք է կարողանալ հասնել բարոյական ազատութեան այն փառաւոր բարձրութեանը որին հասել էին մեր նախնիք Աստուածաշունչ Ս. Մատենի ազդեցութեամբ: Ինչքան էլ բարձր կարողութիւններով և ձիրքերով օժտուած լինինք, առանց Աստուածաշունչ Ս. Դրքի ազդեցութեան անկարող ենք ունենալ այն անկուռն զօրութիւնը և ձեռք բերել այն բարոյական կորուսի որ մեր նախնիք ցոյց տուին շատ պարագաների մէջ:

Ահա այս է պատճառը որ Աստուածաշունչ Ս. Մատենը այնքան ճոխութեամբ և առատութեամբ տարածուած է ամբողջ արեւմտեան քրիստոնեայ աշխարհում, և մարդատէր ու մեծագործ ընկերութիւնների շնորհիւ զիւրամատչելի դարձած ամենքին: Աստուածաշունչի բարոյական ազդեցութեան շնորհիւ է որ այսօր եւրոպական քաղաքակրթութեանը իրենց բոլոր գործերի մէջ բարոյական բարձր զիրք են գրաւել և բարեբաւարի ու խաղաղ կեանք ստեղծել: Բայց ցուօք սրտի պէտք է խոստովանենք այն դառն իրողութիւնը որ մեր ազգին և ժողովրդին մարդարէի սպառնացող սովն է տիրում: Սով ոչ թէ հացի և ջրի, այլ Աստուծոյ խօսքերը լսելու սով:

Մայր Աթոռն Ս. Էջմիածին, որի մեծ

հիմնադիրը կառուցել է իբրեւ լուսնդէն խորան, որանցից պէտք է Աստուածային լոյս և գիտութիւն սփռուի հանուր հայութեան հոգեւոր անդաստանի մէջ, դժբաղդարար մինչեւ այսօր հնարաւորութիւն չէ ունեցել հոգալու այս մեծ կարիքը:

Այժմ այդ մեծ թերին լրացնել է կամենում Ս. Դրիգոր Լուսաւորչի արժանաւոր Աթոռակալը Ազգիս Ս. Հայրապետը:

Նորին Վեհափառութիւնը Ս. Դրքի տրդագրութեան գործը էական խնդիր համարելով և նորա ընդհանրացումն Հայրապետական Աթոռի հետ կապակցեալ տեսնելով, անհրաժեշտ պարտք է համարել իւր Մայր Աթոռն ժամանած օրուանից խորին ուշադրութիւն դարձնել այս կարեւոր խնդրի վերայ խնդիր՝ որի գերագոյն և կենսական զօրութիւնը միմայն ընդունակ է բարեկարգել և բարձրացնել անհատներ և աղետացնել ընտանեկան կեանքը:

Վեհափառ Հայրապետի խորեց ցանկութիւնն է Ս. Դիրքը մաշկլի դարձնել իւրաքանչիւր հայ ընտանիքի, որպէս զի Ս. Դրքի հետ հայ ընտանիքի մէջ թողաւորէ քրիստոնէական աստուածաշունչութեան և բարոյական ազնուութեան տեսչը: Ընտանիքը Եկեղեցու նախագահիմն է, ուրեմն և Եկեղեցու հօտի անդամները ընտանիքի մէջ ևս առիթ պէտք է ունենան լսելու Աստուծոյ քաղցրաւոր ձայնը, որ դէպի հոգեւոր փրկութիւն է առաջնորդում: Ընտանեկան և քրիստոնէական կրթութեան խարխալը Ս. Դիրքը պէտք է լինի մեզ համար:

Երբայի ուրախութեան արժանի մի իրողութիւն պէտք է համարել որ Ս. Աթոռն Ս. Էջմիածին Վեհափառ Հայրապետի նախաձեռնութեամբ սկսում է Աստուածապարգև Ս. Մատենի ապագրութիւնը:

Ցանկալի է որ Մայր Աթոռի հոգեւոր որդիքը՝ աշխարհական և հոգեւորական՝ ցընծութեամբ ողջունեն այս ցանկալի գործը և ջանան նպաստելու նորա տարածմանը: Ծանկալի է միանգամայն որ ամեն մի հայ մարդ շտապէ բաժանորդ դրուելու և օր առաջ ձեռք բերելու Մայր Աթոռի ապարանում լոյս տեսած Աստուա-

ճային ճշմարտութիւններն այն հրաշալի շրջ-
թանոյ որ ներկայացնում է մարդուս առաջ
Աստուծոյ աշխարհին բարեգործան և մարդուս
բարձրացման և բարեկարգման համար կատա-
րած սքանչելի գործը:

Արդէն պատրաստութիւններ են տես-
նուում ներկայ 1900 թուականին սկսե-
լու տպագրութիւնը: Տպագրուել և բաժա-
նուել են թեմական և հոգեւոր տեսաններին և
նրանց ստորագրեալ գործակալներին անգոր-
բազրեր բաժանորդագրութեան համար Մ.
Աթոռի տպարանի կնքով դրօշմած, ժապա-
ւինած և տպարանի տեսչի ստորագրութեամբ
վաւերացած:

Ս. Գիրքը ճաշակով և մաքուր տպագրե-
լու համար պէտք է հրաւիրուի Եւրոպայից
տպարանական գործերին մասնագէտ հմուտ
տպագրիչ:

Տպագրուելի Ս. Գիրքը լինելու է պատ-
կերազարդ և պատկերները առանձին յանձ-
նարարութեամբ պէտք է պատրաստուին Գեր-
մանիայում:

Ս. Վեհի բարեհաճ անօրէնութեամբ
բաժանորդագրինը նշանակուած է 5 ա. որով
տպագրութեան և թղթի անհրաժեշտ ծախ-
քերը զօւարթ թէ կարելի լինի ծածկել:
Սակայն Ս. Հայրապետը աչքի առաջ ունի
Ս. Գրքի տարածման բարոյական օգուտը,
որի մէջ իւր միակ մխիթարութիւնն է տես-
նում, իսկ բաժանորդագրութիւնը միայն թե-
թեւ նպաստ պէտք է լինի շքեղ տպագրու-
թեան մեծ ծախսերի համար:

Պարտաւորութիւն է զրվում Ռուսա-
հայոց բոլոր եկեղեցիների և հոգեւոր պաշ-
տօնեաների վրայ մի մի օրինակի բաժանորդ
գրուելու: Բարոյական պարտք է զրվում նաեւ
կարող ազգայնոց վերայ իրենց կարողութեան
չափով Ս. Գրքի մի քանի օրինակների բա-
ժանորդ գրուելու: Երանց կողմից ձրիապէս
կը բաժանուին աղքատ եկեղեցիներին և չքա-
ւոր հոգեւոր պաշտօնեաներին:

Թարգմանօք խնդրվում է նաեւ բոլոր
թեմ. և հոգ. տեսաններին, գեր. առաջ-
նորդներին, բարձրապատիւ փոխանորդներին
և արժ. գործակալներին փութալ բաժանորդ-
ներ գանելու գործը առաջ տանել: Յատկապէս

խնդրում է նիւթական հարստութեամբ ճո-
խացած ազգայնիկներին փութալ իրենց նիւ-
թական օժանդակութեամբ նպաստել այս
Աստուածահաճոյ մեծ գործին:

ՏԵՍՈՒՉ ՏՊ. ԱՇՈՏ ՎԱՐԿԱՊԵՏ

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

Պետերբուրգում դեկտ. 14-ին նախարարյի
նիւոն եպիսկոպոսի նախագահութեամբ գումա-
րուեցաւ «Կրօնական լուսաւորութիւն» տարածող
ընկերութեան դահլիճում վերջին «հովուական»
ժողովը: Մոսկուայից Պետերբուրգ էր եկել Յով-
սէփ քահանայ Փուշկէ այդ ժողովի համար իւր
պատրաստած «Եկեղեցական կարգապահութիւնը
որպէս կրօնական կեանքը բարձրացնող միջոց»
վերնագրով դատախօսութիւնը կարդալու: Այս
շարադրութեամբ հ. Յովսէփը նախնկարադրեց ժո-
ղովրդի բարոյական կեանքի խիստ անկումը: անկ-
ման պատճառները և ապա այն միջոցները, որով
եկեղեցին ժողովրդի մէջ կրօնական կեանքը նորից
կենդանացնել կարող է: Հ. Յովսէփի ասելով՝
Ռուսաց մէջ գեղեցում բարոյական անկումը
յետին ծայրն է հասել, այս ցաւալի իրողութիւ-
նը ապացուցանում է եղեռնագործութեանց վի-
ճակագրութեամբ: Դատախօսն այդ երևոյթը բա-
ցատրում է քաղաքացիական և ընկերական կեան-
քի պայմանների փոփոխութեամբ: որով հեղինա-
կութեան և առաջնորդելու հնադարեան դադա-
րաւները անգոր են դարձել ներգործելու ժողո-
վրդի վերայ: Եկեղեցուն մնում է այժմ որպէս
միակ միջոց մարտ մղել այդ երևոյթի դէմ խրա-
տելով կամ պատժելով յանցաւորներին: Հ. Յով-
սէփ կարծում է թէ անհրաժեշտ է եկեղեցու մէջ
վերականգնանացնել առաջին դարերի ապաշխա-
րանաց միջոցները: Բանցաւորին հարկաւոր է
նախ խրատել և եթէ չզգուշացաւ, հրապարա-
կային ապաշխարանաց ենթարկել և նոյն իսկ
հարկաւոր դէպքում նզովել կամ մերժել եկեղե-
ցուց: Իւր միտքը բացատրելու համար հ. Յով-
սէփ պատմական մի տեսութիւն է անում հին
եկեղեցու ապաշխարութեան կարգերի վերաբե-
րութեամբ՝ օրինակներ բերելով Պոդոս առաքեա-
լից մինչև Տերտուղիանոս և ապա Ե. դարու
եկեղ. հայրերը: Ռուսաց եկեղեցու մէջ նոյն իսկ
մարմնական պատիժներ են գործադրուել յանցա-
ւորներին համար: Վերջին 25 տարուայ ընթաց-
քում ապաշխարանաց միջոցներն թուլանալով
ընկել է և ժողովրդի բարոյականութիւնը: Հռե-